# Դրուագներ Հայ-ռուսական յարաբերութիւնների անկողմնակալ պատմութեան



Ռաֆայէլ Համբարձումեան

Հիմնաւորապէս պէտք է վերաշարադրել հայ-ռուսական յարաբերութիւններիպատմութիւնը, յատկապէս բացայայտելով մեր ժողովրդի հայրենազրկութեան ու Հայոց ցեղասպանութեան (միջազգային եզրով՝ Արմենոցիդ) մէջ այդ կայսրութեան ունեցած վճռական դերը, իսկ հոգեւոր ցեղասպանութեան մէջ՝ եզակի դերակատարութիւնը...

1897թ. յունուարի 2-ին, երբ հրապարակուեց հայոց դպրոցները փակելու ցարի պաշտօնական հրամանը, Գեւորգեան ճեմարանից բացի, Ռուսաստանում ոչ մի հայկական դպրոց չէր մնացել**(1896թ. Ռուսաստանում կար մօտ 280 հայկական դպրոց, 16000 աշակերտ, Թուրքիայում՝ մօտ 1500 դպրոց՝ 250 000 աշակերտներով, իսկ** 1913-1914թթ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի տուեալներով հայերն ունէին 2538 գործող եկեղեցի, 451 վանք , մօտ 2000 դպրոց՝ չհաշուած Օսմանեան կայսրութեան հայ կաթոլիկների ու աւետարանականների, ինչպէս նաեւ այդ ժամանակ Թուրքիային անցած Ռուսահայաստանի Կարսի, Սուրմալուի գաւառների հայոց դպրոցները): Հրամանը թոյլատրում էր յարքունիս խլել դպրոցական շէնքերն ու գոյքը եւ դրանք վերածել «Ռուսաստանի բոլոր հպատակ ազգերի համար» ռուսական դպրոցների:*

** Հայ պատմագիտութիւնը եկեղեցական գոյքի բռնագրաւումը սկսում է 1903 թուից, մինչդեռ այդ երեւոյթը սկսուել էր դեռեւս 1881թ., երբ հայ ժողովրդի ու եկեղեցու խնայած դրամով գործող դպրոցները առանց հատուցման, կայսրութիւնը պետականացրեց, իսկ 1896թ. կազմեց Հայաստանեայց Եկեղեցու հողերը, շարժական ու անշարժ գոյքը բռնագրաւելու նախագիծ :*

Մոսկուան 1901թ. սկսած՝ նախատեսում էր իրականացնել կովկասահայութեանը Սիբիր աքսորելու Կովկասի կառավարչապետ Գոլիցինի ծրագիրը, որը 1937-1941 եւ 1949թթ.
իրագործեց կոմունիստական Ռուսաստանը:

Հայոց դպրոցները փակելուն զուգահեռ, Ռուսաստանը 1903 թ. վայրենի ու աննախադէպ յարձակումով բռնագրաւեց Հայաստանեայց եկեղեցու գոյքը եւ ունեցուածքը: Ամենայն Հայոց երջանկայիշատակ կաթողիկոս Խրիմեան Հայրիկի գլխաւորութեամբ եւ ՀՅԴ ու հասարակական-քաղաքական-մշակութային բազմաթիւ կառոյցների օժանդակութեամբ, յատկապէս դաշնակցութեան հիմնադիրներից Ռոստոմ գողթնեցու դերակատարութեամբ հայութիւնը ազգովին դուրս եկաւ մեր եկեղեցու գոյքն ու հողերը յափշտակելու ռուսական **1903թ. հրամանագրի դէմ եւ 1905 թ. օգոստոսին ցարին պարտադրեց յետ վերցնել հրամանագիրը: Դրանով ռուսական առաջին**(1905թ.) **յեղափոխութիւնը փաստօրէն կովկասահայե՛րը բոցավառեցին**(հայերը վճռական դեր ունեցան նաեւ Թուրքիայի 1908թ. սահմանադրկան շարժման մէջ, յաղթական աւարտին հասցրեցին եւ իրագործեցին պարսկական 1908-1909թթ. յեղափոխութիւնն ու սահմանադրական շարժումը):

Ռուսաստանը հայութեան կոտորածները Կովկասի թաթարների միջոցով Այսրկովկասում կազմակերպեց **Մեծ եղեռնի սկիզբը համաւող թուականից 10 տարի առաջ**՝ 1905 թ.:

Առաջին աշխարհամարտի սկզբին Ռուսաստանը հայերին ներքաշեց Թուրքիայի դէմ իր պատերազմի մէջ՝ հայերիս յուսադրելով «Հայկական հարցի լուծումով»՝ փոխարէնը պահանջելով ստեղծել կամաւորական ջոկատներ, որոնք պիտի ռուսական զօրքին օգնէին նուաճելու Արեւմտահայաստանը: Մինչդեռ նա դա կարող էր անել Արեւմտեան ճակատ ուղարկած աւելի քան 250 հազար հայ զինուորականների միջոցով: Հետեւանքը եղաւ այն, որ աւելի քան 250 հազար հայ զինուորական տանելով Արեւմտեան ճակատ, որոնցից զոհուեցին մօտ 100 հազարը, Ռուսաստանը առաջին աշխարհամարտի ընթացքում տարեց արեւելահայերից ու արեւմտահայերից կազմուած կամաւորական ջոկատներին քշեց ռուս-թուրքական ճակատի ամենաթէժ կէտերը: **Հայութեան մի մասը մտաւախութիւն ունէր, որ դա կարող է թուրքերին մղել թուրքահայութեան նոր կոտորածների**: Այդպէս էլ եղաւ. Թուրքիան հայերին մեղադրելով պատերազմի մէջ գտնւող երկրին թիկունքից հարուածելու դաւադրութեան մէջ, դա պատրուակ դարձրեց էլ աւելի ընդարձակելու հայոց ջարդերն ու տեղահանութիւնը: Իսկ Եւրոպան հայերի ազատամարտը Թուրքիայում համարելով տիեզերակալութեան ձգտող Ռուսաստանի կազմակերպածը եւ այդ բռնապետութեան ծաւալապաշտութիւնը դիտարկեելով Եւրոպային Կովկասից եւ Թուրքիայից մեկուսացնող գործոն, իրար դէմ պատերազմող, բայց հայերի կոտորածները միսնաբար իրականացնող Թուրքիայի եւ Ռուսաստանի գործողութիւնները կանխելու վճռականութիւն եւ էական հնարաւորութիւններ չունէր...

Հայոց Մեծ եղեռնը Թուրքիայի հետ միասին իրականացնելուց յետոյ Ռուսաստանը ցրեց հայկական կամաւորական ջոկատները՝ հայերին զրկելով թուրքերի ցեղասպանութեանը դիմակայելու, ասել է թէ՝ ինքնապաշտպանութեան հնարաւորութիւնից:

Բոլշեւիկները մէկ քայլ առաջ գնացին իրենց նախորդներից. երբ հայ փախստականները սկսեցին վերադառնալ Թուրքահայաստանի իրենց բնօրրանները, Աւետիս Ահարոնեանի վկայութեամբ, «հէնց այդ ժամանակ ռուսական բանակը լքեց Կովկասեան ճակատը եւ փոքրիկ ուժասպառուած հայկական զօրքին մէն-մէնակ թողեց թուրքերի դէմ»: Ռուսաստանը Բրեստ-Լիտովսկի պայմանագրով Թուրքիային յանձնեց ոչ միայն Արեւմտեան Հայաստանը, այլեւ Կովկասեան Հայաստանի մեծ մասը՝ Կարսը, Արդահանը, Սուրմալուն...

Իր կէսը կորցրած ուժասպառ **Հայ ժողովրդի 1918 թուականի մայիսեան առիւծամարտերով միայնակ ինքնապաշտպանութիւ-նը** թուապէս ու ռազմամթերքով բազմապատիկ իրեն գերազան-ցող թուրքական զօրքերի դէմ եւ ապա՝ 1919-1920թթ. **ռուսեւ-թուրք ռազմական դաշինքի դէմ՝ քաղաքակրթութեան պատմութե-ան ամենահերոսական խոյանքներից է:**

**1920 թ. օգոստոսիւ 10-ին կնքուած Սեւրի միջազգային դաշնագրով** ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը 1920 թ. նոյեմբերի 22-ին կազմեց Իրաւարար վճիռ-քարտէզ: Աշխարհի բազմաթիւ երկրների ստորագրած Իրաւարար վճիռ-քարտէզով Թուրքիան Հայաստանի Հանրապետութեանը պիտի վերադարձնէր 40 հազար քառակուսի մղոն տարածք(աւելի քան 90 հազար քառ.կմ): Այդ ժամանակ Հայաստանի Հանրապետութեան տարածքը մօտ 71 ու կէս հազար քառ. կմ էր: Ամբողջ Հայաստանը Սեւրով նշուած հողամասերի հետ միասին, Գաբրիէլ Լազեանի հաշւումներով ունենալու էր մօտ 162 հազար քառ.կմ տարածք: **Հայաստանի Հանրապետութեան այդ քարտէզը աշխարհի 10-ից աւելի տէրութիւնների ստորագրութեամբ հաստատուած միջազգային իրաւազօր պահանջագիր է Թուրքիայից: Փարիզի, Սան Ռէմոյի ու Սեւրի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող հատուածը Թուրքիայի իրագործած հայոց ցեղասպանութիւնը եւ հայ ժողովրդի հայրենատիրութիւնը միջազգայնօրէն հաստատող եւ ցայսօր իրաւական նշանակութիւնը պահպանած փաստաթղթեր են :**

Սակայն Ռուսաստանը կործանող Թուրքիային 1919 թ. յունիս ամսից մինչեւ 1921 թ.մատակարարեց զէնք, զինամթերք, ոսկի, սննդամթերք, նաեւ զօրք՝ խափանելով Սեւրի միջազգային պայմանագրով Թուրքիայի մասնատումը եւ ԱՄՆ-ի, Եւրոպայի բազմաթիւ երկրների, նաեւ Ճապոնիայի պարտադրանքով աւելի քան 90 հազար քառ.կմ տարածք Հայաստանի Հանրապետութեանը վերադարձնելու այդ պետութեան պարտաւորութիւնը:

**Ընդհանրապէս 1920-1922 թթ. Ռուսաստանը Թուրքիային** տուել է մօտ 140 հազար քառ կմ տարածք(Վիլսոնեան Հայաստանը, Ղարսը, Արդահանը, Սուրմալուն) եւ աւելի քան մէկ տոննա ոսկի: Այսպէս՝ Մոսկուայի ռուս-թուրքական 1921 թ. կոնֆերանսում Ռուսաստանը

պարտաւորուել էր Թուրքիային անհատոյց տալ 10 մլն ռուբլու ոսկի եւ ռազմամթերք : 1921թ ընթացքում Ռուսաստանը Թուրքիային յանձնեց 33275 հրացան, 57 98600 փամփուշտ, 327 գնդացիր, 54 թնդանոթ, հրանոթի 122497 արկ, 1500 սուր, 20 000 հակագազ :1921 թ. հոկտեմբերի 3-ին բոլշեւիկները Ստամբուլում թուրքերին տուեցին նաեւ երկու ծովային կործանիչ, 6,5 մլն ոսկու ձուլակտորներ, իսկ 1922 թ. մայիսին՝ եւս 3,5 մլն ոսկով ռուբլի:

Այս ու նման այլ իրողութիւններից ելնելով, *Հայաստանի Հանրապետութիւնը* Հայաստան- Թուրքիա, ինչպէս նաեւ Հայաստան-Ադրբէջան եւ Հայաստան-Վրաստան միջպետական յարաբերութիւնների եւ պետական սահմանների քաղաքական-իրաւական-դիւանագիտական հիմք պէտք է դարձնի Փարիզի, Սան-Ռէմոյի ու յատկապէս Սեւրի միջազգային դաշնագրերն ու Վուդրո Վիլսոնի Իրաւարար վճիռ-քարտէզը:

**1920 թ. վերջին Ռուս-թուրքական արշաւանքը եւ Հայաստանի առաջին հանրապետութեան կործանումը Հայոց ցեղասպանութեան գագաթնակէտն էր:**

Հայաստանի վրայ յարձակուած ռուսեւթուրք զինակցութիւնը 1920 թ.դեկտեմբերի 2-ին Երեւանում եւ Գիւմրիյում Հայաստանի Հանրապետութեանը պարտադրեց կնքելու հայոց անկախ պետականութիւնը վերացնող փաստաթղթեր, որից յետոյ Ռուսաստանը սկսեց պաշտօնեաների, զինուորականների ու հրամանատարական կազմի, նաեւ մտաւորականների աննախադէպ դաժանութեամբ անողոք բնաջնջումը, կացնահարումը եւ կոտորածը: Հայաստանի բնակչութիւնը 1921 թ. փետրուարի 18-ին յաղթական ապստամբութեամբ ոտքի ելաւ բոլշեւիկեան Ռուսաստանի մարդայօշութեան դէմ: Հայերս բոլշեւիկեան ամբողջատիրութեան տակ կքած 100-ից աւելի **ազգերից միակն էինք, որ** ապստամբելով՝ **երկիրը երեք ամսով ազատեցինք դիւապետութիւնից(Գարեգին Նժդեհի բնորոշումն է)** :

1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական անիրաւազօր գործարքով Հայաստանի Հանրապետութիւնը բռնագրաւած Ռուսաստանը Արեւելահայաստանը գրեթէ ամբողջովին(Կարսը, Սուրմալուն, Իգդիրը, Նախիջեւանը, Արցախը, Ջաւախքը եւ այլ տարածքներ)բաժանեց Թուրքիայի, Ադրբէջանի եւ Վրաստանի միջեւ: 1921 թ. մարտի 16-ի ռուսեւթուրք պայմանագրի հիմնական նպատակը հայոց ցեղասպանութիւնն աւարտելով՝ Հայաստանի Հանրապետութիւնն ամբողջովին վերացնելն էր, որը անպայման պիտի իրականացուէր, եթէ չլինէր Գարեգին Նժդեհի գլխաւորութեամբ ազատագրուած Զանգեզուրի առիւծամարտը... Հետեւաբար՝ Հայաստանի Հանրապետութիւնը Ռուսաստանի դաշնութեանը պէտք է յորդորի չեղեալ յայտարարել բոլշեւիկների կնքած Մոսկուայի ռուս-թրքական բարեկամութեան օրինազանց պայմանագիրը ՝ *միջազգային կառոյցների(ՄԱԿ, Եւրախորհուրդ եւ այլն)օժանդակութեամբ հասնելու համար այն բանին, որպէսզի ԱՅԺՄ ԳՈՅՈՒԹԻՒՆ չունեցող Խորհրդային Ադրբէջանին փոխարինող*

*պետութեան, Ռուսաստանի դաշնութեան, Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ կնքուի Նախիջեւանին վերաբերող միջազգային նոր պայմանագիր :*

**Հայութեան աքսորը Ալթայ եւ Սիբիր**: Շարունակելով ցարական կառավարութեան կիսատ թողած գործը՝ բոլշեւիկեան Ռուսաստանը 1937-1949 թթ. հայ բնակչութեանը Հայաստանից աքսորում էր Սիբիր եւ Ալթայ: Ոչ լիարժէք տուեալներով, միայն 1947-1949 թթ. Հայաստանից Ալթայ է աքսորուել աւելի քան 3017 ընտանիք(14000 մարդ, որոնց մի մասը՝ 1947 թ. Հայաստան եկած հայրենադարձներ): Պաշտօնական ոչ ամբողջական տուեալներով Խորհրդային իշխանութեան տարիներին, 1921-1953 թթ., **միայն** Հայաստանում ձերբակալուել է 42 հազար մարդ(Ա. Վիրաբեան, Հայաստանը Ստալինից մինչեւ Խրուշչով (1945-1957 թթ.), Երեւան, 2001 թ., էջ155 - 168, 200 եւ այլն): Իրականում սակայն Կոմունիստական կայսրութիւնը 1921-1941 եւ 1941-1949 թթ. Հայաստանում ձերբակալել, տեղահանել եւ ոչնչացրել է մօտ 150 հազար հայ մարդու, որոնց մէջ ՅԱՏԿԱՊԷՍ տասնեակ հազարաւոր մշակութային, գիտնական, կրթական գործիչներ ու արուեստագէտներ, գրողներ, ուսուցիչներ: Եթէ այդ թուին յաւելենք կայսրութեան այլ վայրերում բռնադատուած հայերին, ապա նշուած տարիներին ձերբակալուել, աքսորուել եւ ոչնչացուել է աւելի քան 250 հազար հայ մարդ: Եթէ այս թուերին յաւելենք նաեւ երկրորդ աշխարհամարտի՝ ռուս-գերմանական ճակատում զոհուած հայերի թիւը, ապա զոհերի թիւը պիտի մօտենա կէս միլիոնին...Այսպէս՝ Սովետ միութիւնում բնակւող ԵՐԿՈՒ ՄԻԼԻՈՆ 152 860 հազար հայերից պատերազմին մասնակցել է աւելի քան 500 հազար հայորդի, որից 300 հազարը Հայաստանից, 200 հազարը՝ կայսրութեան այլ վայրերից, հիմնականում՝ Կովկասից: Այս 500 հազարից զոհուել կամ ոչնչացուել է մօտ 250 հազարը(սովետական պատմագիտութեան մէջ զոհուածվերի թիւը նշւում է 200 հազար):

**Կոմունիստական կայսրութեան 1949 թ. ապրիլ-յունիս ամիսներին արձակած գաղտնի հրահանգներում նշուած է, որ պետանվտանգութեան մարմինները «դաշնակցական»հայերի Ալթայ պիտի աքսորեն ոչ միայն Հայաստանի Հանրապետութիւնից, այլ նաեւ աւելի քան մէկուկէս միլիոն հայ բնակչութիւն ունեցող Կովկասից, մասնաւորաբար Վրաստանից եւ Ադրբէջանից**: Այս իրողութիւնները կասկած չեն թողնում, որ կոմունիստական Ռուսաստանը 1947-1949 թթ. մշակել ու իրագործում էր **յատկապէս գերմանացիներին, հայերին, 1939 թ. նաեւ լեհ զինուորականներին ու սպաներին ոչնչացնելու յատուկ ծրագիր**:

Միայն Աստուծոյ կամօք չիրականացուեց Հայաստանի **ամբողջ բնակչութեանը Ալթայ քշելով՝այդ անմարդաբնակ տարածքը հայերով բնակեցնելու** հրէշաւոր ծրագիրը, որը պետականօրէն քարոզւում էր ամենուր: Այդ օրերին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Զ Չորէքչեանը Կրեմլին հարց էր տալիս՝ իսկ Արարատ լեռն ու ս. էջմիածի՞նը ինչպէս պիտի տեղափոխուի նոր Հայաստան…

Երկրորդ աշխարհամարտի ընթացքում բոլշեւիկները յատուկ ծրագրով հայ զինուորներին ոչնչացրեցին Կերչում եւ այլուր: 1941-1945 թթ. Հայաստանի ոչ բանակային բնակչութիւնից բռնադատուել է առնուազն 5200 մարդ, որոնցից 466-ը գնդակահարուել է( Ա. Վիրաբեան, Հայաստանը Ստալինից մինչեւ Խրուշչով , էջ155 - 168, 200 ):

Ի դէպ հայ տարրը իր թուի համեմատ սովետներին տուած մէկ շնչին ընկնող հերոսների ու նաեւ զոհերի քանակով կայսրութիւնը լցնող բոլոր ժողովուրդներից առաջինն էր...

Ընդհանրապէս 1840-1990 թթ. ընթացքում հնարաւոր չէ գտնել արեւելահայ որեւէ մեծ գրող կամ արուեստագէտ, որին ռուս պետութիւնը ձերբակալած(Յովհ. Թումանեան, Աւ.Իսահակեան եւ ուրիշներ)կամ նահատակած չլինէր՝ Խաչատուր Աբովեանից ու Միքայէլ Նալբանդեանից սկսած՝ Վահան Տէրեանով, Եղիշէ Չարէնցով, Ակսէլ Բակունցով, Պարոյր Սեւակով ու Մինաս Աւետիսեանով վերջացրած...

Նշուած ու բազմաթիւ այլ փաստերը հիմք են տալիս արձանագրելու հետեւեալ անժխտելի իրողութիւնը.

*ա.Ռուսաստանը 1828 թուականից իրագործելով Հայաստանը հայերից դատարկելու քաղաքականութիւնը,Հայոց ցեղասպանութեան մէջ վճռական դերակատարութիւն է ունեցել եւ Թուրքիայի գործակիցն է: Այսպէս՝*

*Հայոց եղեռնը 1895 թ. սկսուել է Արեւմտահայաստանում, Թուրքիայում աննախադէպ չափերի է հասել 1915-1918 թթ., ապա միայն բոլշեւիկեան Ռուսաստանը 1921 -1949 թթ. շարունակել է Արեւելահայաստանում եւ Կովկասում՝ բնաջնելով մօտ 250 հազար, աքսորելով աւելի քան 100 հազար հայ մարդու: Այսինքն՝ Ռուսաստանն ու Թուրքիան հայերի ցեղասպանութիւնն իրականացրել են 1895 թուականից մինչեւ 1949 թիւը անընդմէջ ՝ ղեկավարուելով Յիսուս Քրիստոսին 2010 տարի առաջ խաչող սատանայապաշտ հետեւորդների մշակած ծրագրով:*

*բ. Յիսուս Քրիստոսին 2000 տարի առաջ խաչող ուժերի հետեւորդները հայերիս եղեռնը կազմակերպել են հոգեբանօրէն, քաղաքականապէս, կեցութեամբ ու աշխարհագրական միջավայրով քրիստոնէութեան պատուարը լինելու համար: Այսպիսով՝ հայութիւնը յանուն եւ ի խնդիր քրիստոնէութեան նահատակուած ժողովուրդ է:*

Բոլշեւիկեան Ռուսաստանը 1917 թ. հոկտեմբերից մինչեւ 1955 թուականը ցեղասպանութեան է ենթարկել նաեւ իր տարածքում բանտուած հարիւրի չափ այլ ազգերի: Ռուսաստանցի գիտնականների նորագոյն տուեալներով բոլշեւիզմը այդ ընթացքում բանտուած 100 ժողովուրդներից ոչնչացրել կամ մահապատժել է 45 միլիոնին(ռուս, ուկրաինացի, թաթար, բելոռուս, հայ եւ այլ ազգեր): Ուստի այդ պետութիւնը անուանել են բռնատիրութիւն, բռնապետութիւն, ազգերի կալանավայր եւ այլն: Սակայն բոլշեւիկեան կասրութեան բուն էութիւնը սահմանող ամենանճշգրիտ եւ փայլուն բնորոշումը տուել է քսաներորդ դարի համաշխարհային

ռազմաքաղաքական մտքի մեծագոյն դէմքերից Գարեգին Նժդեհը՝ այդ երկիրն անուանելով ԴԻՒԱՊԵՏՈՒԹԻՒՆ...

Երկրորդ աշխարհամարտի ընթացքում սովետներն այդպէս բնաջնջեցին աւելի քան 27 միլիոն կայսրութեան զինուորականի(1960-80-ական թթ. պաշտօնական տուալներով՝ 20 մլն):

Քանի որ սովետ միութեան բնակչութիւնը ստրուկ էր, երկրորդ աշխարհամարտում Դիւապետութիւնը իր բնակչութեանը կռուի էր տանում զէնքի ուժով, ոչնչացնելու սպառնալիքով: Կռուի դաշտերում յատուկ ջոկատները գնում էին զօրքի յետեւից, եւ եթէ մէկը փորձում էր յետ ընկնել, անմիջապէս գնդակահարում էին՝ զինուորների մէջ մուծելով սարսափի զգացումը, որ եթէ հանկարծ կռուի ժամանակ զինուորը թշնամու քանակութիւնը կամ ռազմական գերազանցութիւնը զգալով յետ նահանջէր, պիտի անպայման գնդակահարուէր: Իշխանութիւնը սովետական զինուորի հետ վարւում էր իբրեւ անասունի՝ բացարձակապէս չմտածելով զիւորի կեանքը խնայելու մասին: Դա վերաբերում էր նաեւ բարձրագոյն հրամանատարութեանը, որին գրեթէ իսպառ ոչնչացրեցին պատերազմի նախօրէին: Այսպէս. երկրորդ աշխարհամարտի սկզբից 6 ամիս առաջ, 1937 թ. հունուարից մինչեւ 1938 թ. հոկտեմբերը սովետական զօրքերի(այդ ժամանակ սովետի զօրքերի թիւը մօտ ՀԻՆԳ միլիոն էր) միայն բարձրագոյն հրամանատարութիւնից բանտարկուեց-մեծամասամբ գնդակահարուեց **40 հազար հրամանատար՝** մարշալից մինչեւ գնդապետ-փոխգնդապետ: Մարդկութեան պատմութեան մէջ սեփական զինուորականութեան աննախադէպ նախճիր... Փաստերը անհաւատալիօրէն սարսափելի են. սովետական միութեան ԸՆԴԱՄԷՆԸ 5 մարաջախտից(մարշալ)1937-1938 թթ. **գնդակահարեցին** ԵՐԵՔԻՆ:

Սովետական բանակի ունեցած ԱՌԱՋԻՆ կարգի ընդամէնը 5 հրամանատարներից **գնդակահարուեց** ՉՈՐՍԸ:

Բանակում եղած ռազմածովային ուժերի երկրորդ կարգի 7 բարձրագոյն հրամանատարներից **գնդակահարուեցին** ՎԵՑԸ:

Բանակի երկրորդ կարգի 10 բարձրագոյն հրամանատարներից **գնդակահարուեցին** ԲՈԼՈՐ տասը:

Բանակում ծառայող կորպուսի 67 հրամանատարից **գնդակահարուեցին** եւ բանտարկուեցին 60-ը:

Բանակային 15 կոմիսարներից(գաղափարական գծով րամանատարներ)**գնդակահարուեցին** ԲՈԼՈՐԸ:

Կորպուսների եւ դիւիզիաների 92 կոմիսարներից բանտարկեցին եւ գնդակահարուեցին 83-ը:

Դիւիզիայի 186 հրամանատարներից բանտարկեցին եւ գնդակահարուեցին 154-ը:

Բրիգադի 397 հրամանատարներից բանտարկեցին եւ գնդակահարեցին 221-ին:

Սովետական բանակում առկայ 656 գնդապետներից բանտարկեցին եւ գնդակահարեցին 401-ին եւ այլն (տուեալները քաղել ենք պատմագիտութեան դոկտոր Կլիմենտ Յարութիւնեանի եւ Հր.

Պօղոսեանի ռուսերէն ՎԿԼԱԴ ՕՐՄՅԱՆՍԿՕԳՕ ՆԱՐՕԴԱ Վ ՊՕԲԵԴՈՒ Վ ՎԵԼԻԿՕՅ ՕՏԵՉԵՍՏԲԵՆՆՕՅ ՎՕՅՆԷ, Երեւան, 2010 թ., էջ14-15): Հետեւաբար որեւէ զարմանք չի հարուցում այն իրողութիւնը, որ 1941 թ. սովետները լեհական սպայակոյտից գնդակահարեցին մօտ 2600-ին…

*Վաղուց ժամանակն է քաղաքակրթութեան սեփականութիւնը դարձնել այն անժխտելի իրողութիւնը, որ բոլշեւիկեան Ռուսաստանը 1917-1955 թթ. իրականացրեց այդ երկրի հարիւրի չափ բանտեալ ժողովուրդների, այն է՝ սեփական բնակչութեան ցեղասպանութիւն, որը կրկնելով Թուրքիայում 1914-1918 թթ իրականացուածը այդ երկրի հայ քաղաքացիների հանդէպ, իր ծաւալներով ու ընգրկումներով աննախադէպ է մարդկութեան պատմութեան մէջ:*

***Հետեւաբար բոլշեւիկեան Ռուսաստանի 1921-1953 թթ. իրականացրած100-ի չափ ազգերի ցեղասպանութիւնը պէտք է յայտարարուի մարդկութեան պատմութեան արձանագրուած աննախադէպ մարդայօշութիւն եւ այդ երկիրը պէտք է դատի տրուի:***

**Նորագոյն ժամանակներ**

1988 թ. բռնկուած Արցախեան ազատամարտը քաղաքակրթութեանը ազատագրեց մարդկութեանը 80 տարի շարունակ սարսափի մէջ պահող կոմունիստական դիւապետութիւնից, կայսրութիւնում արմատաւորեց ու տարածեց իրաւ ժողովրդավարութիւնն ու մարդու եւ ազգի իրաւունքների պաշտպանութիւնը, որը բռնապետութեան օրրան այդ երկրում այդպիսի շառաւիղներ եւ տարածում երբէք չէր ունեցել:

Իր մութ նպատակներով Կրեմլի հրահրած, բայց Արցախի մարզխորհրդի 1988թ. փետրուարի 20-ի պատմական աննախադէպ որոշումից յետոյ հայութեան կողմից ազգայնացուած **Հայ ժողովրդի արցախեան ազատամարտը փլուզեց կոմունիստական ամբողջատի-րութիւնը**, ազատութիւն բերեց Արեւելեան Եւրոպայի ազգերին եւ ան-կախութիւն՝ կասրութեան «Հանրապետութիւններ»-ին:

Դեռեւս մինչեւ Արցախի մարզխորհրդի 1988 թ. փետրուարի 20-ի որոշումը, **Արցախը փաստացի միացել էր Հայաստանին:** Նկատի ունեմ Արցախը Հայաստանին վերամիաւորելու պահանջով մարզի բնակչութեան համատարած դիմումները Մոսկուա:

Երբ 1988 թ.փետրուարի 20-ի որոշումից ոգեւորուած՝ ժողովրդի մեծ մասը կարծում էր թէ հարցը լուծուած է, Մոսկուան **մերժեց Արցախի արդար պահանջը: Այդ մերժումից հայութեան ուշքը շեղելու համար Կրեմլը** Ադրբէջանի կոմկուսի ղեկավարութեան միջոցով 1988 թ. փետրուար-ապրիլ ամիսներին Սումգայիթում, Բաքւում, Գանձակում եւ Ադրբէջանի միւս վայրերում կազմակերպեց հայերի կոտորածներ:

**Քանի որ Արցախեան շարժումը հրահրել էր Մոսկուան, ապա շարժման գլխին իր դրած «Ղարաբաղ կոմիտէ»կոչուած խմբի ղեկավարների միջոցով վերայսկում էր շարժումը:**

Սակայն «Մոսկուայի...միջոցով Արցախում բորբոքուածը վերածուեց ազգային ազատագրական շարժման»: Հայութիւնն իր ազատամարտով 1989-93 թթ. ազատագրեց Պատմական Արցախի մեծ մասը:

**1989 թ.դեկտեմբերի 1-ին Մոսկուայի դէմ ամրագրած համաժողովրդական աննախադէպ յաղթանակի արդիւնքը Հայաստանի Սովետական Հանրապետութեան եւ Արցախի նորաստեղծ Ազգային խորհրդի միացեալ որոշումն էր, որը Արցախը Ադրբէջանից պոկեց- վերամիաւորեց Հայաստանին: Հայ ժողովուրդն իր միասնական գործողութիւններով իրականացրեց Արցախի վերամիաւորումը , ինչի համար 1988 թ.փետրուարի 20-ից միասնաբար ոտքի էր ելել:**

Այդ քայլով հայութիւնը կոմունիստական բռնապետութիւնից անկախութիւն ձեռք բերած ուազատագրուած առաջին ազգն էր կայսրութիւնում: Հայութիւնը պատրաստւում էր ազտագրելնաեւ մեր բնօրրանի այլ հատուածները եւս՝ հայահոծ Շահումեան, Գետաշէն ,Գանձակ,Մարտունաշէն, նաեւ Նախիջեւանն ու այլ տարածքներ: Սակայն դրսի ուժերը Ղարաբաղկոմիտէի գլխին դնելով իրենց ձեռնասունին՝ նրան դարձրեցին Հայաստանի Հանրապետութեան առաջին նախագահ, որի միջոցով պառակտեցին շարժումը, քակտեցին միաբանութիւնը, մարեցին հայ ազգի երբեւէ ունեցած ամենայուժկու ոգորոմը, նուազագոյնի
հասցրեցին Արցախականի յաջողութիւնները եւ վերջապէս ամենաողբերգականը՝ նրա ձեռքով դատարկեցին Հայաստանը՝ 1991-2003 թթ. երկրից գաղթեցնելով մօտ մէկ միլիոն հայի : Այդ ջլատիչ քայլերը յատկապէս վճռական ընդգրկումներ ունեցան
1991 թ. ապրիլի 31-ից մինչեւ օգոստոսի վերջը: Թրքոբուլշեւիկ զինակցութիւնը այդ ընթացքում Աւելի քան 700 հազար հայերի իրենց պապենական հողերից (այս թւի մէջ են մտնում նաեւ Բաքուից, Նուխիից, Սումգայիթից, Գանձակից, Շամքորից, Քարհատից ու այլ վայրերից տեղահանուած հայերը)տեղահանեցին - դարձրին գաղթական: Մոսկուան թաթարներին զինակից իրականացրեց նաեւ հազարաւոր հայերի կոտորածները: Օրինակ ՝ Մոսկուան 1989 թ. Ադրբէջանցի աւազակախմբերի մասնակցութեամբ Խոջալու քաղաքում եւայլուր պատժիչ գործողութիւններ իրականացրեց Արցախի խաղաղ բնակչութեան հանդէպ:
1991 թ.ապրիլի 30-ին ռուսական բանակը ՕՄՈՆ կոչւող ներքին զօրքերի հետ միասին Հայաստանում եւ Արցախում իրականացրած ԿՈԼՑՕ(հայերէն՝օղակ)գործողութեամբ հայաթափեց Արցախի Գետաշէն, Մարտունաշէն եւ Հադրութ շրջանների գիւղերի մեծ մասը:
1991 թ. օգոստոսի 30-ին Ադրբէջանը յայտարարեց իր պետական անկախութիւնը: Երկու օրյետոյ, 1991 թ. սեպտեմբերի 2-ին Արցախն էլ յայտարարեց Լեռնային ղարաբաղի Հանրապետութիւն հիմնելու, իսկ 1992 թ. յունիսի 6-ին՝ Արցախի պետական անկախութեան մասին հռչակագրերը:

Արցախի բանակը 1992 թ. փետրուարի 25-ից 26-ը ազատագրեց Խոջալուն՝ թաթար բնակչութեան համար այդ քաղաքում եւս թողնելով մահապուրծ լինելու միջանցք...

2002 թ. մայիսի 8-ին Շուշիի ազատագրումից* յետոյ,1992 Մոսկուան Ադրբէջանին տուեց *Հրամանատարութիւնը մեր ռազմարուեստի 4500 ամեայ պատմութեան ամենանշանակալի ու եզակի գործողութիւններից մէկը հանդիսացող Շուշին ազատագրելու քայլերը սկսել էր ՀՀ այն ժամանակուայ նախահագից ու նրա պաշտօնախմբից գաղտնի... այդ երկրում տեղակայուած Անդրկովկասեան ռազմական խմբաւորման 4-րդ բանակի սպառազինութիւնը, յատկապէս այդ խմբաւորման 23-րդ մոտոհրաձգային դիւիզիայի ողջ ռազմամթերքը , զրահատեխնիկան, պարենը եւ այլ ունեցուածքը: Դրանով Ռուսաստանը 1992 թ. ամառային ամիսներին ԼՂՀ-ի տարածքի մօտ կէսը գրաւեց յանձնեց Ադրբէջանին:

Թէեւ հայ զինուորականութիւնը տարուայ վերջերից սկսած ջախջախեց ռուս-թուրքական ուժերը եւ պատրաստւում էր ազատագրական պատերազմը շարունակել Ադրբէջանի խորքերում՝ ազատագրելու համար Նախիջեւանը, Գանձակը եւ այլ տարածքներ, բայց Ռուսաստանը կարողացաւ կասեցնել մեր ռազմերթը, կասեցնել թշնամու ջախջախումը՝ Հայաստանին ստորագրել տալով Բիշկեքի զինադադարը: Այդ զինադադարից առաջ Հայաստանը կարող էր եւ պէտք է որ Ադրբէջանին ստիպեր հատուցելու Արցախին հասցուած վնասը, վճարելու ռազմատուգանք, քանի որ յարձակուելով մեր վրայ, հայ-թաթար
պատերազմը ինքն էր սկսել:

Այսպիսով՝ 1992-1993 թթ. Մոսկուան իր ռազմական ուժով, հրասայլերով , զրահամեքենաներով ու զինանոցով Հայաստանի ծեռնասուն ղեկավար Լեւոն Չարագործի վճռական օժանդակութեամբ հասաւ այն բանին, որ 1994 թ. մայիսի 5-ին Բիշկէքում Հայաստանին պարտադրեց դադարեցնել առաջխաղացումը, մեր երկրին ստիպեց մայիսի 12-ին ստորագրել յաղթարշաւը կասեցնելու համաձայնագիր, որի տակ, ի դէպ, Ադրբէջանը մինչեւ այսօր իր ստորագրութիւնը չի դրել(այդ երկիրը համաձայնագրին միանալու մասին տեղեկացրեց մայիսի 17-ին՝ հեռագրով...): Ռուսաստանն այսպէ՛ս կանգնեցրեց հայութեան յաղթարշաւն Արցախում, պահպանեց թաթարների պետութիւնը, ոչ միայն օգնեց ադրբէջանցի կոչուած ջարդարարներին, այլեւ այժմ դարձեալ զինելով Ադրբէջանին, լծուած է Արցախը այդ երկրին վերակցելու անսքող գործողութիւններին...

Դրա պերճախօս վկայութիւնը Ռուսաստանի պարտադրութեամբ 2010 թ. օգոստոսին կնքուած հայ-ռուսական պայմանագիրն է(ժողովուրդն ասում է՝ ՂԱՋագիր): Աննախադէպ ճորտամտութիւն համաշխարհային պատմութեան մէջ: Դրանով Հայաստանն իր քաղաքական խամաճիկի կարգավիճակը երկարաձգեց 49 տարով հերիք չէ, մեր երկրի քիչ թէ շատ ինքնուրոյն միակ կառոյցը հանդիսացող զինուժը նոյնպէս դարձրեց Ռուսաստանի հրամանակատարը, որպէսզի այդ երկիրը ցանկացած պահի Արցախի Հանրապետութիւնն ու ազատագրուած տարածքները ԱՆԱՐԳԵԼ յանձնել Ադրբէջանին...

# Insurance in Ancient Iran

*By: Mohammad Sadegh Nazmi Afshar*



**Text:** Achaemenians are one of the Iranian dynasties used to rule in the whole world known in their times between the 6th and 3rd centuries BC. Cyrus the Great, one of the monarchs of this dynasty, could establish the first world government in the 6th century BC after conquering the governments of Babylon, Assyria, Medes, India, and other small governments of his era.

After Cyrus, his son Cambodia succeeded to join the Egyptian government to this union. So, for the first and last time in the history, all the governments of the world were ruled under the same colors; the Greek governments were under the political supremacy of Iran since the time of Achaemenian Ardeshir, and other points of the world lacked any population then, and there was no other known country in these regions.

Formation of such government in the world presented the man many new positive approaches. Of all the changes, it can be mentioned that standards of' weigh, money, and distance became global, and the architecture of different nations of the world were compiled in Achaemenian constructions.

Takht-e Jamshid, one of the Persian capitals, was built by the architects and artists from Iran, Egypt, India, Lebanon, Assyria, Babylon, Greece, etc. Hence, the art of all these nations could be found in this great monument.



Another measures taking place in the time of world Achaemenian government was establishing a law known today as insurance. Achaemenian monarchs were the first insured their people and

made it official by registering the insuring process in governmental notary offices. The insurance tradition was performed each year in Norouz (beginning of the Iranian New Year); the heads of different ethnic groups as well as others willing to take part, presented gifts to the monarch. The most important gift was presented during a special ceremony and when a gift was worth more than 10,000 Derrik (Achaemenian gold coin weighing 8.35-8.42) the issue was registered in a special office. This was advantageous to those presented such special gifts. For others, the presents were fairly assessed by the confidants of the court. Then the assessment was registered in special offices.

The aim of registering was that whenever the one who presented the gift registered by the court was in trouble, the monarch and the court would help him or her. Jahez, a historian and writer, writes in one of his books on ancient Iran: "... and whenever the owner of the present is in trouble or wants to construct a building, set up a feast, have his children married, etc. the one in charge of this in the court would check the registration. If the registered amount exceeded 10,000 Derrik, he or she would receive an amount of twice as much."

Even if a person did not offer money as the gift or the amount of his gift was insignificant, the measure would register and whenever the person faced a problem, the attendants were obliged to report the issue to the monarch.

Jahez writes: "And the monarch should help him. So, when the monarch was informed that the man has something, an apple for instance, in the court, he ordered to send an apple full of gold coins to him."



The insurance rule for the one who had presented a spear was that whenever he was in trouble, they took the offered spear with his name on it and installed it somewhere. Then they put the kingdom dresses beside it right as high as the spear. It is worth noting that such dresses were so precious and the man could solve his problem by selling the dresses. Basically, in ancient Iran, the monarchs donated their dresses when the season changed. As written in the

history, Ardeshir, son of Babak (the first Sassanid monarch - 2nd century), Bahrain Gour, Anoushirvan, and other Sassanid monarchs had ordered to take out all their dresses from the dress treasury in Norouz and Mehregan ceremonies, the beginning of spring and autumn respectively, and give them to the attendants, special people of the court, and then other people regarding their social levels. The philosophy of such a measure was that the Iranian monarchs believed that they did not need any summer dresses in winter and vice versa and it is not the habit of monarchs to hide such dresses in the treasuries. It was noted in the law that whenever the one who has offered some presents in Mehregan or Norouz ceremonies to the court is in trouble, he should go to the court and remind the monarch of his problem and compensation regulations if he has not received any. He should not neglect the rule otherwise, in case he knowingly ignores and may not inform the court of his reward, he would be deprived of his stipend. Then his opponents, if any, may be paid instead of him as he has behaved in a way unpleasant for the monarch disgracing the country.

It would be concluded that the Persian monarchs supported their peoples lawfully. It can also be claimed that Iranian executed the insurance regulation for the first time.